ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/16-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 22.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից և «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ստեփանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, հիմք ընդունելով 23.01.2020թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-9/16-4 գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **884,834.5** (ութ հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր երեսունչորս դրամ, հիսուն լումա) ՀՀ դրամ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան, Արաբկիր 19փ., 6/75
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 22031196048200
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00152854
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/16-4 պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Մատակարարումները ըստ 2020թ. եռամսյակների, այդ թվում՝		Մատակարարման հասցեն
								2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	
								Քանակ	Քանակ	
4	Կոննեկտոր շնչական, գոֆրեային ուղիղ	INTERSURGICAL	INTERSURGICAL	հատ	1,188	200	237,600	200		ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
5	Կոննեկտոր շնչական, գոֆրեային անկյունային, բրոնխոսկոպի պորտով	INTERSURGICAL	INTERSURGICAL	հատ	3,333.33	150	499,999.5		150	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
15	Ինտուբացիոն ստիլետ միջին չափսի	SUMI	SUMI	հատ	1,781	20	35,620		20	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
16	Ինտուբացիոն ստիլետ մեծ չափսի	SUMI	SUMI	հատ	1,781	15	26,715		15	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
25	Օռոֆարինգեալ օդամուղ N3	SUMI	SUMI	հատ	247.5	40	9,900		40	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
42	Օքսիգենոթերապիայի քթային փողակ մեծահասակի	SUMI	SUMI	հատ	300	150	45,000	10	140	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա
74	Օքսիգենոթերապիայի քթային փողակ մեծահասակի	SUMI	SUMI	հատ	300	100	30,000	50	50	ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ԵՏԱԳ-ի գլխավոր վարչության պետ

Մ. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ տնօրեն

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-20-9/16-4 պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	CPV ծածկագիրը	CPV անվանումը	Գնման առարկայի անվանումը	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից, ըստ ամիսների, ընդ որում՝							
					մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.
4	33171100/554	անզգայացման գործիքներ	Կոննեկտոր շնչական, գոֆրեային ուղիղ	237,600	237,600	237,600	237,600	237,600	237,600	237,600	237,600	237,600
5	33171100/555	անզգայացման գործիքներ	Կոննեկտոր շնչական, գոֆրեային անկյունային, բրոնխոսկոպի պորտով	499,999.5	0	0	499,999.5	499,999.5	499,999.5	499,999.5	499,999.5	499,999.5
15	33171100/563	անզգայացման գործիքներ	Ինտուբացիոն ստիլետ միջին չափսի	35,620	0	0	35,620	35,620	35,620	35,620	35,620	35,620
16	33171100/564	անզգայացման գործիքներ	Ինտուբացիոն ստիլետ մեծ չափսի	26,715	0	0	26,715	26,715	26,715	26,715	26,715	26,715
25	33141182/586	վիրափողեր (դրենաժներ)	Օռոֆարինգեալ օդամուղ N3	9,900	0	0	9,900	9,900	9,900	9,900	9,900	9,900
42	33171400/540	վերակենդանացման դիմակ	Օքսիգենոթերապիայի քթային փողակ մեծահասակի	45,000	3,000	3,000	45,000	45,000	45,000	45,000	45,000	45,000
74	33141211/565	բժշկական այլ գործիքներ և պարագաներ	Օքսիգենոթերապիայի քթային փողակ մեծահասակի	30,000	15,000	15,000	30,000	30,000	30,000	30,000	30,000	30,000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏՄ գլխավոր վարչության պետ

_____ Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ տնօրեն

_____ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ